Վ. Համբարձումյանը ակտիվ մասնակցություն է ունենում մեր երկրի հասարակական կյանքին։

Որպես գիտական և քաղաքական գիտելիքների տարածման Հայկական ընկերության նախագահ նա ոչ միայն ղեկավարում, այլ նաև գործոն մասնակցություն է ունենում ժողովրդի մեջ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների մասսայականացման և տարածման գործին։

Վ. Համբարձումյանը խաղաղության անխոնջ մարտիկ է։ Երկար ժամանակ նա ղեկավարել է խաղաղության պաշտպանության Հայկական կոմիտեն, մասնակցել խաղաղության կողմնակիցների համամիութենական և համաշխարհային մի շարք կոնգրեսների։

1950 թվականից սկսած նա երեք անգամ ընտրվել է երկրի իշխանության բարձրագույն օրգանի՝ ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ։ 1948 թ. Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի անդամ է։

Վ. Համբարձումյանի գործունեությունն ըստացել է բարձր գնահատական։ Գիտության զարգացման գործում աչքի ընկնող ծառայությունների համար նա երկու անգամ արժանացել է Ստալինյան մրցանակի, պարգևատրվել է Լենինի և Աշխատանքային Կարմիր Դրոշի երկու շքանշաններով, իսկ 1953 թ. ընտրվել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։

Վ. Համբարձումյանն ընտրվել է նաև մի շարք օտարերկրյա ակադեմիաների ու գիտական ընկերությունների անդամ։ Նա հանդիսանում է Ավստրիական և Գերմանական Գիտությունների ակադեմիաների և Լյեժի (Բելգիա) Թագավորական գիտական ընկերության Բոլոնիա-անդամ, Արվեստների և Գիտությունների Ամերիկյան Ակադեմիայի (Բոստոն) օտարերկրյա պատվավոր անդամ, Անգլիական Թագավորական աստղագիտական ընկերության և Ամերիկյան աստղագիտական ընկերության պատվավոր անդամ։

1956 թ. նրան գիտական ծառայությունների համար շնորհվել է ֆրանսիական Աստղագիտական ընկերության Ժանսենի անվան մեդալ։

Իր հիսնամյակը սովետական խոշորագույն աստրոֆիզիկոսը դիմավորում է ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում։

Նա լի է յուրօրինակ հղացումներով, ապագայի նկատմամբ համարձակ ու մեծ պլաններով։ Նրանց իրականացումը, անկասկած, նոր ու հետաքրքիր շատ բան կբերի գիտությանը։

Լ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտը կազմակերպվել է 1955 թվականին տնտեսագիտության սեկտորի հիման վրա, որը ստեղծվել էր 1943 թվականին Գիտությունների ակադեմիայի կազմակերպման ժամանակ։ Անցած տարիների ընթացքում թե՛ սեկտորը, և թե՛ ինստիտուտը զգալի աշխատանք տարան ռեսպուբլիկայի առաջ կանգնած ժողովրդա-տնտեսական խնդիրների ուսումնասիրության ասպարեզում։

Ներկայումս Տնտեսագիտության ինստիտուտի գիտա-հետազոտական գործունեությունը ընթանում է հիմնականում չորս ուղղությամբ՝ սոցիալիզմի քաղաքատնտեսության և Հայաստանի տնտեսության պատմության, արդյունաբերության էկոնոմիկայի, գյուղատնտեսության էկոնոմիկայի և Հայաստանի ժողովրդական տնտեսության կոմպլեքս պրոբլեմների ուսումնասիրության հարցերի շուրջը։

Այս հարցերի գիտական խորը ուսումնասիրության համար ինստիտուտը համալրված է համապատասխան բարձրորակ գիտական աշխատողներով, որոնց թվում կան տնտեսական գիտությունների 6 դոկտոր-պրոֆեսորներ, գիտությունների 13 թեկնածուներ և ավագ ու կրտսեր գիտական աշխատողներ։ Նրանցից շատերը սովորել և գիտական աստիճան են ձեռք բերել Հայաստանում, ինչպես նաև Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի ինստիտուտներում ու բարձրագույն հաստատություններում։

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ առաջին անգամ պայմաններ ստեղծվեցին Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման թե՛ ընթացիկ, և թե՛ հեռանկարային հարցերը վերլուծելու և գիտական մշակման ենթարկելու համար։

Հայ ժողովրդի անցյալի տնտեսագիտական մտքի զարգացման պատմությունը մինչև վերջին ժամանակները մարքսիստական ուսումնասիրության և լուսաբանման չէր ենթարկվել։ Մեր պատմիչների ձեռագիր աշխատություններում, ինչպես նաև հասարակական-քաղաքական մտքին վերաբերող տպագիր գործերում հարուստ նյութ կա հայկական տնտեսագիտական մտքի վերաբերյալ։ Տնտեսագիտության ինստիտուտը

իր առջև խնդիր է դրել մոտակա 5—7 տարիների ընթացքում վեր հանել հայ ժողովրդի այդ հարուստ ժառանգությունը և տալ մանրակրկիտ գիտական ուսումնասիրություններ՝ նվիրված հայ տնտեսագիտական մտքի զարգացման և տնտեսագիտության պատմության հարցերին։

Թե՛ տնտեսագիտական մտքի պատմության, և թե՛ տնտեսության պատմության հարցերը ուսումնասիրվում են ըստ հետևյալ երեք հիմնական շրջանների. առաջին՝ հնագույն ժամանակներից մինչև XIX դարի առաջին քառորդը ներառյալ (մինչև Հայաստանի միացումը Ռուսաստանին), երկրորդ՝ XIX դարի երկրորդ քառորդից մինչև XX դարի 20-ական թվականները (մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում) և երրորդ՝ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության և տնտեսագիտական մտքի զարգացման պատմությունը։

Հայ տնտեսագիտական մտքի պատմությունը հետաքրքրական կլինի այն տեսակետից, որ այնտեղ կտրվեն ոչ միայն հանրահայտ, այլև մինչև այժմ չուսումնասիրված մի շարք հայ տնտեսագետների հայացքները՝ Հայաստանի տնտեսական զարգացման ուղիների մասին։ Շուտով տպագրության կհանձնվի հայ տնտեսագիտական մտքի պատմության երկրորդ հատորը, որը արդեն պատրաստ է։

Տնտեսագիտության ինստիտուտում մշակում են նաև սոցիալիզմի քաղաքատնտեսության տեսական ու պրակտիկ նշանակություն ունեցող մի շարք հարցեր։ Մշակվում են «Սոցիալիզմի ժամանակ աշխատավարձի էությունն ու ձևերը», «Առևտրի դերը սովետական էկոնոմիկայի զարգացման պրոցեսում» և այլ թեմաներ։

Ինստիտուտի արդյունաբերության էկոնոմիկայի բաժնի ուսումնասիրած կարևորագույն թեմաներից ուշադրության է արժանի ռեսպուբլիկայի մեքենաշինության զարգացմանը վերաբերող թեման։

Արդյունաբերության կառավարումը վերակառուցելու և ռեսպուբլիկայում ժողովրդական տնտեսության խորհուրդ ստեղծելու կապակցությամբ, անհրաժեշտ եղավ հիմնովին վերանայել և գիտականորեն հիմնավորել տնտեսական նոր շրջայնացման պայմաններում Հայաստանի մեքենաշինական արդյունաբերության մասնագիտացման ու կոոպերացման պրոբլեմը։

Թեմայի արդյունքների քննարկման և գիտական հետևությունների կոորդինացման համար Հայաստանի Տնտեսագիտության ինստիտուտի նախաձեռնությամբ Երևանում հրավիրվեց Անդրկովկասյան Գիտությունների ակադեմիաների Տնտեսագիտության ինստիտուտների ռեգիոնալ խորհրդակցություն, որին մասնակցեցին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտի գիտնականները, ռեսպուբլիկաների պետպլանների, ժողովրդական տնտեսության խորհուրդների և արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավար աշխատողներ ու մասնագետներ։ Խորհրդակցությունն անցավ հաջողությամբ և տվեց դրական արդյունք։

Ինստիտուտը մշակել և ռեսպուբլիկայի Պետական պլանային հանձնաժողովին է ներկայացրել «Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. պլանի սխեման» աշխատությունը, որը օգտագործվեց ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարային պլանները կազմելու համար։ Այդ մշակումների հիման վրա Գիտությունների ակադեմիայի Ջրաէներգետիկ ինստիտուտը կազմեց ռեսպուբլիկայի էներգետիկայի բալանսը։

Ինստիտուտը Ռեսպուբլիկայի կառավարության հանձնարարությամբ անցյալում մշակել էր երկաթուղային տրանսպորտի զարգացման գլխավոր պլանի սխեման և տվել նրա տեխնիկա-էկոնոմիկական հիմնավորումը։ Վերջերս երկաթուղիների Երևանի բաժանմունքի խնդրով Ակադեմիայի պրեզիդենտի հանձնարարությամբ մշակվեց ռեսպուբլիկայի երկաթուղիների (Լենինական—Երևան, Երևան—Ախտա գծի) լրիվ էլեկտրիֆիկացման հարցը։ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ էլեկտրիֆիկացման հետևանքով մեծ չափով կավելանա գծամասի գնացքների շարժման արագությունը, կաշխուժանան բեռնափոխադրումները և զգալիորեն կիջնի փոխադրումների ինքնարժեքը։

Ուսումնասիրությունների արդյունքները հանձնվել են ճանապարհների Միութենական մինիստրությանը և Հայաստանի բաժանմունքին՝ կիրառելու համար։

Ռեսպուբլիկայի ալյումինի արտադրության համար խոշոր նշանակություն ունի տեղական այն հումքի օգտագործումը, որ Ակադեմիայի Հանքաբանության ինստիտուտի կողմից հայտնաբերվել է Ախտայի շրջանում։ Դրանք նեֆելինային սիենիտներն են, որոնց պաշարները Հայաստանում փաստորեն անսպառ են։ Այդ կապակցությամբ ինստիտուտը տնտեսապես հիմնավորեց Ախտայում լեռնաքիմիական կոմբինատ ստեղծելու անհրաժեշտությունը, նկատի ունենալով նրա ժողովրդա-տնտեսական նշանակությունը և շահաբերությունը։ Այդ կոմբինատը բացի կավահողից, միաժամանակ կարտադրի մի շարք օժանդակ նյութեր, որոնք ռեսպուբլիկայի համար ժողովրդա-տնտեսական մեծ նշանակություն կունենան։ 1958 թվականին Միության

Պետպլանում քննության առնվեց և հավանություն տրվեց կոմբինատի կառուցմանը։

Ռեսպուբլիկայի Պետպլանի հանձնարարությամբ հիմնավորվել է ռեսպուբլիկայում ֆորստերիտային հանքերի օգտագործման տնտեսական էֆեկտիվությունը, որպես հրակայուն շինվածքների արտադրության լավագույն և էժան հումք։

Խոշոր տնտեսական նշանակություն ունի ռեսպուբլիկայում հայտնաբերված այդ հանքերի շահագործման հետ կապված կալցինացված սոդայի արտադրություն կազմակերպելու հարցը։ Կալցինացված սոդայի կարիքը մեծ է ոչ միայն մեր ռեսպուբլիկայի արդյունաբերության համար, նրա կարիքը զգում են նաև մեր հարևան ռեսպուբլիկաները՝ Ադրբեջանական և Վրացական ՍՍՌ-ները։

Սոդայի գործարանի կազմակերպման տնտեսական էֆեկտիվության հարցը ևս քննարկված է ինստիտուտի կողմից և քննարկման արդյունքները ներկայացված են Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովին, որպեսզի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարային պլաններում նախատեսվի այդպիսի գործարանի կառուցումը։

Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետի կողմից ինստիտուտին հանձնարարված էր մշակել ռեսպուբլիկայում հայտնաբերված ոսկու հանքավայրի արդյունաբերական շահագործման տնտեսական հիմնավորումը։ Այդ աշխատանքը ինստիտուտը կատարեց ռեսպուբլիկայի Երկրաբանական վարչության աշխատակից, հանքերի էքսպեդիցիայի պետ ընկ. Ս. Մաթևոսյանի մասնակցությամբ։ Ներկայումս հանքավայրում շինարարական մեծ աշխատանք է կատարվում։ Դա արտակարգ շահաբերություն ունեցող առաջնահերթ կառուցում է։ Այս հանքավայրի արդյունաբերական օգտագործումը մեծ եկամուտներ կբերի ռեսպուբլիկային։

Ինստիտուտի կողմից առաջ է քաշվել ռեսպուբլիկայում կենտրոնական ձուլարան կառուցելու հարցը։ Այդպիսի ձուլարանի անտեսական էֆեկտիվության մասին մանրամասն զեկուցագիր է ներկայացվել համապատասխան մարմիններին։

Ինստիտուտի գյուղատնտեսության էկոնոմիկայի բաժինը ուսումնասիրում է ռեսպուբլիկայի գյուղատնտեսության արտադրողական ուժերի տեղաբաշխման և ճյուղերի հետագա զարգացման հեռանկարների հարցերը։ Այդ տեսակետից ժողովրդատնտեսական մեծ նշանակություն ունի «Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության տեղաբաշխման և մասնագիտացման» թեմանը։

Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և մասնագիտացման թեման մշակելիս, հիմք են ընդունվել ռեսպուբլիկայի բնակլիմայական պայմանները՝ զոնայականությունը, շրջանների արտադրական ներկա արդյունավետ ուղղությունը։

Համաձայն այդ նախագծումների, ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը ավելի խորը մասնագիտացման կենթարկվի խաղողի, մրգերի, ինչպես նաև հարավային ջերմասեր բանջարեղենների՝ որպես գյուղատնտեսության առավել եկամտաբեր ճյուղերի, արտադրության ուղղությամբ, և դրան համապատասխան մեծ չափերով կավելանա գինու-կոնյակի և մրգա-բանջարեկենային պահածոների արտադրությունը և դրանց լայն արտահանումը Հայկական ՍՍՌ սահմաններից դուրս։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության հետագա զարգացման ծրագրի իրականացման համար վճռական նշանակություն ունի ոռոգման ջրանցքների շինարարության աշխատանքների ծավալումը։ Մոտակա 10—15 տարիների ընթացքում նախատեսվում է կառուցել մի շարք նոր, խոշոր ոռոգման ջրանցքներ։ Դրանք կոռոգեն տասնյակ հազար նոր, այժմ անմշակ հողեր։ Ջրովի հողերի ընդհանուր տարածությունը, որոնք ապահովված կլինեն ամառային ջրով, կավելանա ավելի քան 2,5 անգամ, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի խաղողի այգիների տարածությունը ավելացնել 2,8 անգամ, բանջարանոցային կուլտուրաներինը 1,7 անգամ։

Ռեսպուբլիկայում հետագա մեծ զարգացում կստանա նաև անասնաբուծությունը։ Կաթի արտադրությունը կավելանա 5,2 անգամ, մսինը՝ 3 անգամ, բրդինը՝ 3,7 անգամ, ձվինը՝ 4,8 անգամ։ Ավելի շատ կարտադրվեն հայկական լավորակ շվեյցարական և այլ տեսակի պանիրներ։

Այս բոլորի հետևանքով գյուղատնտեսության համախառն արտադրանքը կավելանա չորս անգամ։ Հայաստանը, բարձր զարգացած բազմաճյուղային արդյունաբերության երկիր լինելուց բացի, միաժամանակ կդառնա բարձր զարգացած ինտենսիվ գյուղատնտեսական արտադրություն ունեցող երկիր։

1958 թվականին ինստիտուտը լրացվեց մի նոր սեկտորով ևս, որը զբաղվելու է ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի տեղաբաշխման և ժողովրդական տնտեսության կոմպլեքսային պրոբլեմների ուսումնասիրության հարցերով։

Անընդհատ բարձրացնելով գիտական աշխատողների մասնագիտական որակը, ինստիտուտը նոր հնարավորություններ է ստանում ռեսպուբլիկայի առաջ կանգնած ժողովրդա-տնտեսական խնդիրների մշակման և լուծման համար։

ԱՐ. ՄԱՐՈՒԽՅԱՆ